ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳԲՔԱ-LO-2020/123
որոշման վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2020թ.-ին ներկայացվել է բողոք:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.12.2020թ.-ին, իսկ 11.12.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/123 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

18.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 29.12.2020թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/123 որոշմամբ որոշել է՝

1. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/123 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Կոմիտաս 54 բ, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru